Իրավիճակային վերլուծություն 1

Գործող մարզպետը, որը արձակուրդ չի վերցրել, աշխատանքային ժամին ներկա է եղել իշխող քաղաքական կուսակցության գրասենյակում: Համայնքի ղեկավարը, քարոզարշավի նպատակով արձակուրդում եղած ժամանակ, գտնվել է իր գրասենյակում: Համապատասխան մարզում քարոզչական միջոցառումները տեղի են ունեցել աշխատանքային ժամերին և հանրային ծառայողները, որոնք արձակուրդում չեն եղել մասնակցել են դրանց: Մեկ այլ մարզում հինգ համայնքի ղեկավար և երկու ղեկավարի տեղակալ աշխատանքային ժամերին ներգրավված են եղել քարոզչական միջոցառումներում: Համապատասխան մարզի երեք համայնքներում համայնքի ղեկավարները քարոզչություն են իրականացրել առանց արձակուրդ վերցնելու:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ երկարաժամկետ դիտորդները զեկուցել են մի քանի դեպքերի մասին, երբ գործող նախագահի կամ համապատասխան կուսակցության շտաբները գտնվել են կամ ընտրական հանձնաժողովների հետ մեկտեղ նույն շենքերում, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում, կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն հանդիսացող շինություններում, օրինակ՝ համապատասխան քաղաքապետարանի սեփականություն հանդիսացող շախմատի դպրոցում, թանգարանում և հյուրանոցում, համայնքային պոլիկլինիկայում, հանրային գրադարաններում, մշակույթի տներում, դպրոցի սեփականություն հանդիսացող երեք շինություններում և դպրոցում:

Խնդրում ենք վերլուծել սույն օրինակում նկարագրված դրվագները և գնահատեք յուրաքանչյուր դրվագի պարագայում հնարավոր վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման առկայության կամ բացակայության, այլ հնարավոր խախտումների առկայության հանգամանքները, հիմնվելով ՀՀ օրենսդրական կարգավորումների վրա:

Իրավիճակային վերլուծություն 2

Հայաստանում անցկացված ընտրություններից մեկի նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզարշավի վերջին օրը իշխող քաղաքական կուսակցության կողմից կազմակերպվել էր համակիրների խոշորածավալ երթ և հանրահավաք, որի ընթացքում տեղական դիտորդական առաքելությունն արձանագրել է հետևյալ դրվագները.

Երևանի մի քանի վարչական շրջաններից աշխատանքային ժամերին կազմակերպված ձևով՝ ավտոբուսների միջոցով, աշխատակազմերը տեղափոխվել են միջոցառման վայրեր և մասնակցել երթին ու հանրահավաքին: Մի քանի մարզերից համայնքապետարանների և մարզպետարանի աշխատակիցները կազմակերպված ձևով մասնակցել են երթին և հանրահավաքին, հիմնականում՝ լքելով աշխատավայրը աշխատանքային ժամերին:

Առանձին նախարարությունների և պետական մարմինների աշխատակիցներին հրահանգներ են տվել և հորդորել մասնակցելու հանրահավաքին:

Արձանագրվել է առանձին նախարարությունների, Երևանի ընդհանուր իրավասության դատարանի, քաղաքապետարանի աշխատակիցների կոլեկտիվ մասնակցությունը:

Միջոցառումներին մասնակցել են կրթական հաստատությունների աշխատակիցներ տարբեր քաղաքներից, որոնք, ըստ ստացված տվյալների, բերվել են հավաքի հարկադրանքի միջոցով:

Առանձին վարչական շրջանի աշխատակիցները հանրահավաքի և երթի ժամանակ օգտագործել են իրենց ծառայողական մեքենաները:

Խնդրում ենք վերլուծել սույն օրինակում նկարագրված դրվագները և գնահատեք յուրաքանչյուր դրվագի պարագայում հնարավոր վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման առկայության կամ բացակայության, այլ հնարավոր խախտումների առկայության հանգամանքները, հիմնվելով ՀՀ օրենսդրական կարգավորումների վրա:

Իրավիճակային վերլուծություն 3

Հայաստանում անցկացված ընտրություններից մեկի նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեղական դիտորդական առաքելությունն արձանագրել է հետևյալ դրվագները:

Իշխող կուսակցության շտաբների ներկայացուցիչների հետ հարցազրույցի ընթացքում պարզ է դարձել, որ համայնքի բնակիչները ներկայացրել են իրենց խնդիրը կուսակցության շտաբում, իսկ շտաբի ներկայացուցիչները տեղում զանգահարել են վարչական շրջան և արագ լուծում ապահովել քաղաքացիների խնդիրներին կամ այս մեխանիզմով հասցեագրել են խնդիրները համապատասխան վարչական շրջաններ:

Համապատասպան համայնքի զբոսայգում տեղի ունեցած քարոզչական միջոցառման ժամանակ ներկա են եղել մանկապարտեզների և դպրոցների աշխատակիցներ, որոնց ներքին խոսակցություններից պարզ է դարձել, որ վերջիններս ստիպված են եկել՝ տնօրենների կարգադրությամբ:

Երևանի մարզադպրոցներից մեկի մարզիչը իշխող քաղաքական կուսակցության օգտին քարոզչական տարրեր պարունակող միջոցառմանը մարզադպրոցի սաների մասնակցությունն ապահովման նպատակով դպրոցի սաների ծնողական խմբում տարածել է միջոցառման մասնակցության մասին հայտարարությունը, նշելով, որ «ցանկալի ու պարտադիր է բոլորի ներկայությունը», իսկ միջոցառումից ժամեր առաջ ծնողներին ևս մեկ անգամ հիշեցում է ուղարկվել երեխաների մասնակցության մասին: Բացի այդ, մարզադպրոցի ֆեյսբուքյան էջում բազմաթիվ են եղել համապատասխան կուսակցության և թեկնածուի քարոզչական նյութերը: Նույն միջոցառմանը մասնակցություն ապահովելու նպատակով մեկ այլ երաժշտական դպրոցի սաների ծնողական խմբում տեղադրվել է միջոցառման հայտարարությունը՝ ընդգծելով, որ երեխաների և ծնողների մասնակցությունը շատ ցանկալի է և որ խնդրանքը փոխանցվում է տնօրենի անունից:

Խնդրում ենք վերլուծել սույն օրինակում նկարագրված դրվագները և գնահատեք յուրաքանչյուր դրվագի պարագայում հնարավոր վարչական ռեսուրսի ոչ իրավաչափ օգտագործման առկայության կամ բացակայության, այլ հնարավոր խախտումների առկայության հանգամանքները, հիմնվելով ՀՀ օրենսդրական կարգավորումների վրա:

Լսարանի հետ վարչական ռեսուրսի չարաշահման ռիսկ պարունակող իրավիճակների քննարկում՝ հակիրճ օրինակներով, այդ թվում՝

- Թեկնածու հանդիսացող պաշտոնատար անձի կամ իշխող քաղաքական ուժի կողմից պետական կամ համայնքային բնույթի միջոցառումների և/կամ տեխնիկական ռեսուրսների օգտագործում՝ նախընտրական քարոզչության նպատակներով:

- Բյուջեի, օրինակ՝ մշակութային միջոցառումների համար հատկացված բյուջեի անհամաչափ ծախսում՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

- Հանրային տրանսպորտի կամ հանրային միջոցների օգտագործում՝ քաղաքական գովազդի նպատակով:

- Մարդկային ռեսուրսների օգտագործում՝ նախընտրական քարոզչության և ծառայողական պարտականությունների կատարման զուգակցման միջոցով, օրինակ՝ աշակերտների և ուսուցիչների ներգրավում քարոզչական միջոցառումներին, նախընտրական քարոզչության իրականացում աշխատանքային ժամերին, նախընտրական քարոզչության իրականացման նպատակով ձևակերպված արձակուրդի ընացքում ծառայողական պարտականությունների կատարում:

- Ճնշումների գործադրում հանրային ծառայողների նկատմամբ՝ որոշակի կուսակցության օգտին քվեարկելու, որոշակի ձայների քանակ ապահովելու, քարոզչական միջոցառմանը մասնակցելու, կամ ընդդիմադիր քաղաքական ուժի միջոցառմանը չմասնակցելու նպատակով, աշխատանքից ազատում կամ ազատման սպառնալինքի գործադրում՝ որոշակի թեկնածուի օգտին չքվեարկելու դեպքում:

- Ճնշման կամ ահաբեկման կիրառում թեկնածուների նկատմամբ՝ ընտրությունների ընթացքում ինքնաբացարկ ներկայացնելու նպատակով:

- Ճնշման գործադրում տարբեր մասնավոր ընկերությունների նկատմամբ՝ ընդդիմադիր թեկնածուներին նախընտրական քարոզչության նպատակով վարձակալությամբ տարածքներ չտրամադրելու նպատակով:

- Հանրային տարածքի անհավասարաչափ բաշխում՝ նախընտրական քարոզչության իրականացման նպատակով:

- Քաղաքական ընդդիմադիրների նկատմամբ թիրախավորված հետապնդումների կամ համանման վարույթների իրականացում։

- Հանրային լրատվամիջոցներում գործող պաշտոնատար անձի օգտին ժամանակի/ծավալի անհամաչափ բաշխում, բոլոր թեկնածուների/կուսակցությունների լրատվամիջոցների հավասար հասանելիության ապահովման պահանջների խախտում, կողմնակալ վերաբերմունքի դրսևորում իշխող քաղաքական ուժի նկատմամբ։